

Ակադեմիական բարեկարգության հաքաթոն | ցուցումներ մասնակիցների համար

Մինչև հաքաթոնը

1. Ծանոթացի՛ր Եվրոպայի խորհրդի զեկույցին
<http://www.coe.int/hy/web/yerevan/strengthening-integrity-and-combating-corruption-in-higher-education-in-armenia>
2. Հուլիսի 8-ին արի՛ «Իմփաթեթ հաք» ժամանակին և գրանցվի՛ր մուտքի մոտ: «Ապելլա ինստիտուտի» ներկայացուցիչը կդիմավորի քեզ մուտքի մոտ: Շենքի դռները բացվում են 9:30 և փակվում 20:00-ին: Կիրակը օրը կարող ես ժամանել 9:30 և աշխատել խմբիդ հետ:
3. Հնարավորության դեպքում քեզ հետ բե՛ր համակարգիչդ, պլանշետդ, սմարթֆոնդ կամ տեխնիկական այլ սարքավորում (օր.՝ լուսանկարչական ապարատ), որ կարող է քեզ պետք գալ: Սրահում անվճար Wi-fi է լինելու:

Ի՞նչ և ե՞րբ պիտի ներկայացնեմ:

Հաքաթոնի ընթացքում երկու անգամ պետք է ներկայանաս.

Գաղափարի ներկայացում – շաբաթ օրը՝ հուլիսի 8-ին՝ ժամը 14:00: Գաղափարի ներկայացումը չպիտի գերազանցի **2 րոպեն**:

Յուրաքանչյուր մասնակից կամ խումբ ունենալու է 2 րոպե ժամանակ՝ ներկայացնելու հաղորդակցման արշավների իրենց նախնական գաղափարները: Գաղափարները լսելուց հետո դրանք գրվելու են ֆլիփ-չարթի վրա, և հրավիրելու ենք մասնակիցներից յուրաքանչյուրին իրենց մոտ առկա գունավոր թղթերը փակցնել այն գաղափարի դիմաց, որն ամենաշատն են հավանում: Խմբերը ձևավորվելու են ըստ նախընտրած գաղափարի: Արդյունքում, յուրաքանչյուր խումբ դասընթացավարների և մենթորների աջակցությամբ պետք է հաքաթոնի երկու օրերի ընթացքում իր գաղափարը վերածի հաղորդակցման արշավի նախնական նմուշի:

Ծրագրի ներկայացում – կիրակի օրը՝ հուլիսի 8-ին՝ ժամը 15:00: Արշավի գաղափարի ներկայացումը չպիտի գերազանցի **3-5 րոպեն**: Կազմակերպիչների կողմից կներկայացվի, թե ինչ և ինչպես է պետք ներկայացնել:

Խմբերի ձևավորումից հետո յուրաքանչյուր խումբ պետք է աշխատի հաղորդակցման արշավների գաղափարի զարգացման վրա և արշավի նախնական տարբերակը ներկայացնի կիրակի օրը:

Ինչպե՞ս եմ ձևավորում խումբը:

1. Յուրաքանչյուր խումբ պետք է կազմված լինի նվազագույնը 3 հոգուց, առավելագույնը՝ 6 հոգուց: Հրաշալի կլինի, եթե խմբի անդամներն ունենան հետևյալ դերաբաշխումը
 - Խմբի կորդինատոր
 - Հանրային կապերի, մարկետինգի կամ հաղորդակցման հմտություններ ունեցող

- անդամ
 - Քաղաքագիտության գիտելիքներ ունեցող անդամ
 - Հավելյալ՝ սոցիալական կայքի մենեջեր, դիզայներ, լրագրող ...
2. Խմբերի ձևավորումից հետո յուրաքանչյուր խմբի կորդինատորը պետք է **շաբաթ օրը՝ մինչև ժամը 16:00**, victoriaaydinyan@gmail.com էլ. փոստի հասցեին ուղարկի հետևյալ տեղեկատվությունը. խմբի անդամների անունները, խմբի կորդինատորի կոնտակտային տվյալները, գաղափարի կարճ նկարագիրը (2 նախադասությամբ) և խմբի անունը (ցանկության դեպքում):
 3. Խմբերի ձևավորումից հետո յուրաքանչյուր խումբ ունենալու է 2 մենթոր, ովքեր օգնելու են արշավի կազմակերպման հարցում:

Ինչպիսի՞ն է լինելու աշխատանքային գործընթացը.

Բոլոր խմբերը շաբաթ օրը ստանալու են հստակ ցուցումներ, թե ինչ է պետք ներկայացնել կիրակի օրը: Շաբաթ և կիրակի օրերին նրանք աշխատելու են մենթորների և կազմակերպիչների հետ հաղորդակցման արշավների նախագծերը ստեղծելու ուղղությամբ:

Մենթորներն աջակցելու են խմբերին՝ համոզվելու, որ յուրաքանչյուր խումբ ունի պատշաճ տեղեկատվություն և ցուցումներ: Մենթորները խորհրդատվություն են տրամադրելու հետևյալ օրերին.

Շաբաթ՝ հուլիսի 8-ին՝ ժամը 16:30 - 18:30

Կիրակի՝ հուլիսի 9-ին՝ ժամը 11:00 – 12:30

Յուրաքանչյուր խումբ կարող է հաղորդակցվել **մեկ կրթության ոլորտի և մեկ հաղորդակցման մենթորի** հետ: Մենթորների մասին տեղեկատվություն կարող եք ստանալ «Ապելլա ինստիտուտի» կայքում. <http://apellainstitute.org/academic-integrity-hackathon-meet-the-mentors/>

Ինչպե՞ս եմ ուղարկելու արշավիս նախագիծը:

Խնդրում ենք **կիրակի օրը՝ հուլիսի 9-ին՝ մինչև ժամը 14:00-ն**, victoriaaydinyan@gmail.com էլ. փոստի հասցեին ուղարկել ձեր խմբի արշավի նախագիծը (առավելագույնը 3 էջանոց տպագիր տեքստ + հնարավորության դեպքում նաև արշավի նախնական պատկերներ, պաստառներ, նմշներ): Ծրագրերի ներկայացումից հետո ժյուրիի անդամները գնահատելու են արշավների նախագծերը և հայտարարելու հաղթողներին հետևյալ անվանակարգերում.

- Հաղորդակցման լավագույն գաղափարը
- Արշավի ամենանորարար գաղափարը
- Արշավի ամենածախսարդյունավետ գաղափարը
- Սոցիալական կայքի լավագույն արշավը

Ժյուրիի անդամներին կարող եք ծանոթանալ «Ապելլա ինստիտուտի» կայքում.

<http://apellainstitute.org/academic-integrity-hackathon-program/>

Որո՞նք են գնահատման չափանիշները:

Գնահատման չափանիշները հետևյալն են.

- Գաղափարի նորարարությունը
- Ամբողջականությունը, հստակությունը, ապագա արշավի մանրամասների ներկայացումը
- Իրագործելիությունը
- Ծախսարդյունավետությունը
- Կայունությունը և շարունակականությունը
- Ազդեցության չափը
- Աշխատանքի հետագա զարգացման պոտենցիալը:

Այլ տեղեկատվություն.

- Արշավների գաղափարների ներկայացումից հետո կիրակի օրը՝ հուլիսի 9-ին, լավագույն 3-4 գաղափարները ճանաչվելու են հաղթող ժյուրիի անդամների կողմից վերոնշյալ չափանիշներին համապատասխան: «Ապելլա ինստիտուտը» և նրա փորձագետներն աշխատելու են հաղթող խմբերի հետ՝ վերածելու նրանց գաղափարները ամբողջական արշավների:
- Մինչև հանրությանը ներկայացնելը ընտրված գաղափարները պետք է ավելի զարգացվեն, հետևապես ընտրված մասնակիցների կողմից հավելյալ աշխատանքներ են պահանջվում:

Հաթաթոնից հետո

Հաղթած խմբերը մենթորների աջակցությամբ պետք է մինչև սեպտեմբերի 15-ը իրենց գաղափարները վերածեն ամբողջական արշավների: Արշավների ձևավորումից հետո դրանք ներկայացվելու են սեպտեմբերի վերջին կազմակերպվելիք կոնֆերանսի ընթացքում և տարածվեն «Ապելլա ինստիտուտի» կայքի, սոցիալական կայքերի միջոցով և փոխանցվեն համալսարաններին:

Ծրագրի ժամանակացույցին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝

<http://apellainstitute.org/apella-institute-launches-new-project-on-academic-integrity-in-armenia/>